

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25-ԻՆ
ԺԱՄԸ 16: 00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ՝

Ա. Ղարիբյան	ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական
Տ. Դավթյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Վ. Գաբրիելյան	ՀՀ ֆինանսների նախարար
Կ. Կարապետյան	Երևանի քաղաքապետ
Ս. Սարգսյան	ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի նախագահ
Ա. Ղազարյան	«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միություն» ՀԿ-ի նախագահ
Գ. Արզումանյան	«Արմենիան Քափրը Փրոգրամ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
Կ. Սարգսյան	«Էլեկտրասարք» ԲԲԸ-ի գլխավոր տնօրեն
Ա. Ղուկասյան	«Հայաստանի բանկերի միություն» ԻԱՄ-ի նախագահ
Ս. Բեկիրսկի	«Տոսպ» տրիկոտաժի ֆաբրիկա» ԲԲԸ-ի գլխավոր տնօրեն
Ն. Նահապետյան	«Ակադեմիկոս Ա. Լ. Մնջոյանի անվան Գյումրու հիդրոէլեկտրակայան» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն
Գ. Գյուլբուդաղյան	«Գրանդ Տորոնթոն Ամիո» ՍՊԸ-ի տնօրեն
Գ. Աբրահամյան	«Ղի Սի Էյ Հայաստանի ադամանդագործական ընկերություն» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի նախագահ
Տ. Դավթյան	«Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
Ս. Գիշյան	«ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ի գլխավոր գործադիր տնօրեն
Կ. Գևորգյան	«Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ» հիմնադրամի գործադիր տնօրենի

պաշտոնակատար

Ռ. Ծառուկյան	«Մուլտի-Ագրո» արտադրական կենտրոն» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն
Ա. Հակոբյան	«ՄԻՍ Նատուրալ» ՍՊԸ-ի նախագահ
Ռ. Հարությունյան	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն (խորհրդի քարտուղար)

Հրավիրվածներ`

Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Ա. Գրիգորյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար
Ս. Կարապետյան	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Ա. Հարությունյան	ՀՀ բնապահպանության նախարար
Գ. Խաչատրյան	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ
Կ. Մինասյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
Ա. Ալավերդյան	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ
Խ. Ավայան	ՀՀ վարչապետի օգնական
Հ. Մկրտչյան	ՀՀ վարչապետի օգնական
Լ. Հունանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Վ. Պողոսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ
Վ. Բարսեղյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ
Վ. Զիբուխյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի ձեռներեցության իրանման բաժնի պետ
Կ. Գրիգորյան	Համաշխարհային բանկի Երևանյան գրասենյակի տնտեսագետ
Ա. Կարապետյան	Մարդկային ռեսուրսների կառավարման ասոցիացիայի նախագահ

Դ. Գազիյան	«Ամերիկայի առևտրի պալատը Հայստանում» ԻԱՄ-ի տնօրեն
Վ. Ռազլոզ	Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկի Երևանյան գրասենյակի տնօրեն
Ա. Գրիգորյան	Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկի գործարարության աջակցության Երևանյան գրասենյակի տնօրեն
Ժ. Արամյան	«Ջարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գործարարության աջակցման հարցերի քարտուղարության պետ
Հ. Ասլանյան	«Ջարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գլխավոր իրավաբան
Մ. Մելիքյան	«Ջարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի հասարակայնության հետ կապերի մասնագետ
Հ. Տորտիկյան	«Ջարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գործարարության աջակցման հարցերի քարտուղարության առաջատար մասնագետ
Օ. Հայրապետյան	«Ջարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գործարարության աջակցման հարցերի քարտուղարության առաջատար մասնագետ
Մ. Սարգսյան	«Ջարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գործարարության աջակցման հարցերի քարտուղարության առաջատար մասնագետ

1. ՀՀ կառավարության նախաձեռնությամբ 2010 թվականին իրականացված գործարար միջավայրի բարելավմանն ուղղված բարեփոխումների մասին

(Կ. Մինասյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 1-ին հարցը զեկուցեց ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ Կ.

Մինասյանը և նշեց, որ ՀՀ կառավարության նախաձեռնությամբ 2010 թվականին իրականացված գործարար միջավայրի բարելավմանն ուղղված բարեփոխումների արդյունքում կատարվել են մի շարք իրավական ակտերում փոփոխություններ: Արդյունքում`

1) «Մեկ պատուհանի կանգառ» սկզբունքի ներդրման նպատակով և ընկերությունների էլեկտրոնային գրանցման համակարգը ներդնելու համար ՀՀ կառավարության որոշմամբ ՀՀ արդարադատության նախարարությանը տրամադրվել է տարածք: Մշակվել են օրենսդրական փոփոխությունների նախագծեր, որոնք 2010 թվականի դեկտեմբեր ամսին առաջին ընթերցմամբ ընդունվել են ՀՀ ԱԺ-ի կողմից: Արդյունքում իրավաբանական անձանց

գրանցումն ամբողջությամբ կիրականացվի իրավաբանական անձանց պետական գրանցման գործակալությունում՝ «Մեկ պատուհանի կանգառ» սկզբունքով: Ֆիրմային անվանման փորձաքննությունից բացի՝ 2011 թվականի ապրիլից ՀՎՀՀ-ի ստացումը ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից նույնպես կապահովի պետական ռեգիստրը: Այս միջոցառումների արդյունքում իրավաբանական անձանց գրանցումը կիրականացվի 3 օրում:

2) գրանցման օրերի թիվը և ընթացակարգերը կրճատելու, գրանցման ձևերը պարզեցնելու և միավորելու նպատակով, ինչպես նաև առևտրային իրավաբանական անձանց պետական գրանցման համար պահանջվող փաստաթղթերի նմուշային ձևերը հաստատվել են ՀՀ արդարադատության նախարարի հրամանով: Արդյունքում, կրճատվում է ընկերության գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելու վրա ծախսվող ժամանակը:

3) ՀՀ առևտրային կազմակերպությունների կողմից կնիքի օգտագործման պարտադիր պահանջի վերացման նպատակով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի նիստում ընդունվել է 84 իրավական ակտերում փոփոխությունների իրականացման նախագծերի փաթեթը, որի նպատակն է վերացնել առևտրային կազմակերպություններից պարտադիր կնքված փաստաթղթեր ներկայացնելու պահանջը: Ներկայումս մշակվում են նաև այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու նախագծեր՝ առևտրային կազմակերպություններից պարտադիր կնքված փաստաթղթեր ներկայացնելու պահանջը վերացնելու համար: Համաձայն նշված նախագծերի՝ բիզնեսի հիմնադրման և հետագա գործունեության ժամանակ գործարարն այլևս պարտադրված չի լինի կնիք ունենալ:

4) հարկային հաշվետվությունները միասնականացնելու և հարկատեսակները կրճատելու նպատակով՝

ա. ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունվել է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-189-Ն ՀՀ օրենքը, համաձայն որի՝

- 2011 թվականի հունվարի 1-ից ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ կազմակերպությունները, անկախ ԱԱՀ վճարող համարվելու հանգամանքից, չեն ներկայացնում ֆինանսական հաշվետվություններ (Ձև1 և Ձև2) հարկային մարմին,

- ռեզիդենտ կազմակերպությունները շահութահարկի կանխավճարները և շահութահարկի նվազագույն վճարումները կատարում են եռամսյակային կտրվածքով՝ նախկին ամսականի փոխարեն,

- ոչ ռեզիդենտներին եկամուտներ վճարելիս հարկային գործակալները վճարված

եկամուտների և պահված շահութահարկի վերաբերյալ ամփոփ հաշվարկը ներկայացնում են տարեկան կտրվածքով՝ նախկին եռամսյակայինի փոխարեն,

բ. ՀՀ վիճակագրության պետական խորհուրդն իր որոշումներով ուժը կորցրած է ճանաչել ՀՀ վիճակագրության պետական խորհրդի ձև 1-Ֆ (տարեկան) և 2-Ֆ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվությունների ներկայացման պարտադիր պահանջը,

գ. ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունված «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-182-Ն Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ անկախ վարձու աշխատողների քանակից՝ գործատուները հարկային մարմին պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվետվությունները ներկայացնում են եռամսյակային կտրվածքով՝ նախկին ամսականի փոխարեն,

դ. սահմանվել է ձեռնարկատիրական գործունեության առարկաների և հասույթների գրանցման (հաշվառման) գրքերը նաև էլեկտրոնային եղանակով վարելու կարգը, արդյունքում, տնտեսավարողները կունենան էլեկտրոնային եղանակով ձեռնարկատիրական գործունեության գրքերը վարելու հնարավորություն, ինչը խոշոր տնտեսավարողների համար կկրճատի գրքերի վարման համար ծախսվող ժամանակը և միջոցները:

Նախատեսվում է միասնականացնել ներկայումս գործող եկամտահարկը և սոցիալական վճարները:

5) ռիսկերի վրա հիմնված ստուգումներ իրականացնելու նպատակով և հարկային տեսչությունների արդյունավետության գնահատման համակարգի ներդրման համար սահմանվել են հարկային տեսչությունների աշխատանքների արդյունքների գնահատման չափանիշներ և ցուցանիշներ, ինչպես նաև հարկային տեսչությունների աշխատանքների արդյունքների հաշվարկման կարգ: Ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգ մշակելու նպատակով հաստատվել է Ռիսկերի կառավարման և ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրողականության համակարգի տեխնիկական առաջադրանքը: Ստուգումներ կիրականացվեն միայն ռիսկային չափանիշների հիման վրա ընտրված տնտեսավարող սուբյեկտների մոտ:

6) 2010 թվականի նոյեմբերի 18-ի ՀՀ կառավարության որոշմամբ երկարաձգվել է մինչև 70 մլն դրամ տարեկան շրջանառություն ունեցող ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների մոտ տեսչական ստուգումների արգելքը:

7) հարկային մարմիններ էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման ուղղությամբ 2011 թվականի հունվարի 1-ից էլեկտրոնային եղանակով

ներկայացման ծրագրային համակարգում ներդրվել են 27 հաշվետվություններ: Կրճատվել է հաշվետվությունների լրացման և ներկայացման համար ծախսվող ժամանակը և միջոցները, ինչպես նաև հարկային մարմնի հետ շփումները:

8) ՀՀ կառավարության կողմից 2011 թվականի փետրվարի 10-ին ընդունվել է գերավճարների և (կամ) գերավճարից տարբերվող գումարների հետ վերադարձն օրենքով սահմանված ժամկետից ուշացնելու համար տույժերի հաշվարկման, հաշվանցման և (կամ) վճարման կարգը, որով սահմանվում է նաև գերավճարի հետվերադարձը 90 օրից ուշացնելու դեպքում գերավճարի գումարին տույժերի ավելացում:

9) ուսումնասիրվել է մաքսային ձևակերպումների ամբողջ ժամանակահատվածը՝ մաքսային սահմանը հատելուց մինչև ապրանքների բացթողումը:

10) 2010 թվականի դեկտեմբերի 30-ին ընդունվել է ապրանքի ծագման երկրի հավաստագրերի տրամադրման և փորձաքննության անցկացման նոր կարգ, որով կրճատվել են տնտեսավարող սուբյեկտների կողմից հավաստագրման գործընթացի համար ծախսվող ժամանակը և ծախսերը, մասնավորապես, սերիալային արտադրության ապրանքների համար պարբերաբար ծագման երկրի հավաստագիր կտրամադրվի միայն առաջին անգամ փորձաքննություն իրականացնելիս: Ներդրվել է նաև հավաստագրի տրամադրման մեկ պատուհանի սկզբունքը և հավաստագրերի տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման էլեկտրոնային եղանակը:

11) ինժեներական սպասարկում իրականացնող ծառայությունների կողմից տրվող օբյեկտի նախագծման տեխնիկական պայմանները կառուցապատողին են տրամադրվում ճարտարապետահատակագծային առաջադրանքի հետ համատեղ ճարտարապետահատակագծային առաջադրանք տվողի կողմից («Մեկ պատուհանի» սկզբունքով):

12) քաղաքաշինության ոլորտում նախատեսվող գործունեության վերաբերյալ բնապահպանական փորձաքննական եզրակացությունը ձեռնարկողին է տրվելու փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 30-օրյա ժամկետում:

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը նշեց, որ գործարար միջավայրի բարելավմանն ուղղված բարեփոխումների, ինչպես նաև ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 9-ի N 1768-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրի իրականացման արդյունքում Հայաստանը պետք է ձգտի հայտնվել լավագույն 20 երկրների շարքում:

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ

Կ. Մինասյանի զեկուցումը.

2) առաջարկել Երևանի քաղաքապետ Կ. Կարապետյանին մինչև առաջիկա ՀՀ կառավարության նիստը ՀՀ քաղաքաշինության նախարար Վ. Վարդանյանի հետ համատեղ քննարկել «Հայաստանի Հանրապետությունում շինարարության օբյեկտների կառուցապատման ընթացակարգերը կանոնակարգելու և մի շարք իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը և ըստ անհրաժեշտության խմբագրել այն:

2. Հայաստանի գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն ու տնտեսության զարգացմանն ուղղված գործարար համանյքի ներկայացուցիչների կողմից արված մի շարք առաջարկությունների քննարկման մասին

(Ռ. Հարությունյան, Ա. Ղազարյան, Ժ. Արամյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 2-րդ հարցի կապակցությամբ`

1) «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միություն»

ՀԿ-ի նախագահ Ա. Ղազարյանը ներկայացրեց հետևյալ առաջարկները`

ա. ՀՀ գործարար միջավայրի մի շարք ոլորտների բարելավմանն ուղղված իրավական ակտերի փոփոխությունների քննարկումները կազմակերպել մինչև դրանց ընդունումը,

բ. ԳԱԽ-ի շրջանակներում ձևավորել հանձնաժողովներ, աշխատանքային խմբեր, որոնք կհամագործակցեն տարբեր գերատեսչությունների և պետական կառույցների հետ,

գ. ձեռնարկել կոնկրետ քայլեր` հանրապետության թեթև արդյունաբերության հետագա զարգացման ուղղությամբ` դիտարկելով որպես գերակա ճյուղ: Օրագրի մշակմանը մասնակից դարձնել Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միությանը, ոլորտի առաջատար ձեռնարկություններին, շահագրգիռ այլ կազմակերպություններին,

դ. իրավաբանական և ֆիզիկական անձանց որպես հարկ վճարողների «փոխկապակցվածության» բնորոշման հստակ ձևակերպումը սահմանել օրենքով,

ե. ՀՀ կառավարությանն առնթեր պետական եկամուտների կոմիտեում ստեղծված բողոքարկման հանձնաժողովում ընդգրկել գործատուների միության ներկայացուցիչներին.

2) «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գործարարության աջակցման հարցերի քարտուղարության պետ Ժ. Արամյանը ներկայացրեց հետևյալ առաջարկները`

ա. վերանայել արտադրության նորացման և տեխնիկական վերազինման խրախուսման քաղաքականությունը, մասնավորապես, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6¹-րդ հոդվածից հանել և ընդհանրապես չսահմանել ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող ապրանքային խմբեր և ԱԱՀ-ի հետաձգմամբ խրախուսել տնտեսության բոլոր ոլորտների նորացման և վերազինման նպատակով մինչև 300 մլն դրամ արժողությամբ մեքենա-սարքավորումների ներկրումը, տեղակայումը և գործարկումը,

բ. վերացնել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ, 84-րդ և 102-րդ հոդվածների և ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի առկա հակասությունները,

գ. հանել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի առաջին մասի 11-րդ ենթակետը, քանի որ ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականի փետրվարի 24-ի ՄԴՈ-792 որոշմամբ հակասահմանադրական է ճանաչվել գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծումը՝ աշխատողի կենսաթոշակային տարիքի լրանալու կապակցությամբ,

դ. վերացնել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածով սահմանված աշխատանքային պայմանագրի լուծման դեպքում աշխատողին աշխատանքային ստաժով պայմանավորված ծանուցման ժամկետների տարբերակված մոտեցումը,

ե. վերանայել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 129-րդ հոդվածով նախատեսված արձակման նպաստի տարբերակված մոտեցումը:

3) «Կունվերս բանկ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Տ. Դավթյանն առաջարկեց վերանայել «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 11-րդ կետով սահմանված տրանսպորտային միջոցի գրավի և լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի պետական գրանցման ժամկետները, այսինքն, լիզինգային ֆինանսավորման գործընթացում ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրերով վարձակալության իրավունքի պետական գրանցման համար սահմանված 5-օրյա ժամկետը հաշվարկել ոչ թե գործարքի կատարման օրվանից, այլ լիզինգի առարկան ՀՀ տարածք ներմուծելու օրվանից.

4) «Ակադեմիկոս Ա. Լ. Մնջոյանի անվան Գյումրու հիդրոէլեկտրակայան» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն Ն. Նահապետյանն առաջարկեց՝

ա. վերանայել ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՓՀԷԿ-երին տրվող ջրօգտագործման երեք տարով տրվող թույլտվության սահմանված ժամկետները, այսինքն, ՓՀԷԿ-երին տրվող ջրօգտագործման շարունակական թույլտվության ժամկետը՝ առանց որևէ խոչընդոտի երկարաձգել և համապատասխանեցնել ՀՀ Հանրային ծառայությունները

կարգավորող հանձնաժողովի կողմից ՓՀԿ-երին տրվող էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիայի ժամկետին, որը տրվում է 15 տարի ժամկետով,

բ. վերանայել նոր կառուցվող ՀԷԿ-երի կողմից հանրապետություն ներմուծվող տուրբո-գեներատորների համար 8502 ծածկագրին դասվող ապրանքների նկատմամբ մաքսային մարմինների կողմից հաշվարկվող և գանձվող ավելացված արժեքի հարկի հաշվարկման պահանջը: Ուստի, առաջարկեց 8502 ծածկագրով ներմուծվող ապրանքները ներառել «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և սկզբիցային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկ մաքսային մարմինների կողմից չի հարկվում և չի գանձվում» ՀՀ օրենքում կամ 8502 ծածկագիրը ներառել ՀՀ օրենքով սահմանված այն ապրանքների ցանկում, որոնց համար կիրառվում են «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 6¹-րդ հոդվածը.

5) ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի նախագահ Մ. Մարգարյանն նշեց, որ «ԱԱՀ-ի մասին» 6¹-րդ հոդվածի փոփոխության գծով տրված պաշտոնական պարզաբանումը բարդացնում է ձեռնարկությունների՝ ԱԱՀ-ի գծով հարկային հաշվառումը: Այդ կապակցությամբ առաջարկեց վերանայել այն, քանի որ «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 6¹-րդ կետի փոփոխությունը և պարզաբանումը կգործի, եթե ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կազմում գտնվող երկու կառույցների միջև գործի ԱԱՀ-ի հավաքագրվող գումարների միասնական տեղեկատվության փոխանակման հստակ համակարգ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գ. Խաչատրյանը նշեց, որ «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 6¹-րդ կետի փոփոխության անհրաժեշտությունը հիմնականում պայմանավորված էր կազմակերպությունների կողմից ՀՀ ներմուծվող մեքենա-սարքավորումների գծով տրվող հարկային արտոնության և ԱԱՀ-ի հետաձգման ժամկետի (մեկ կամ երկու տարի) ընթացքում դրանց օտարման փաստով, որի հետևանքով առաջանում էին հարկային պարտավորություններ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Ա. Ալավերդյանը նշեց, որ բողոքարկման հանձնաժողովը կազմված է նախարարների տեղակալների մակարդակով, որում ընդգրկված են ՀՀ ֆինանսների նախարարի, ՀՀ էկոնոմիկային նախարարի, ՀՀ արդարադատության նախարարի, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի համապատասխան տեղակալներ, ինչպես նաև տվյալ նախարարություններից այլ

ներկայացուցիչներ: Դրանից բացի՝ համապատասխան կարգում ամրագրված է բողոքարկման հանձնաժողովի նիստերում ՀԿ-ների ու այլ կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցության հնարավորության հարցը: Ուստի, բողոքարկման հանձնաժողովում գործատուների միության ներկայացուցիչների ընդգրկման հարցը համարվում է կատարված:

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը նշեց, որ՝

1) 2010 թվականի դեկտեմբեր ամսին ՀՀ ԱԺ ներկայացված և ընդունված օրենսդրական փաթեթով արդեն իսկ սահմանվել է «փոխկապակցվածության» բնորոշման հստակ ձևակերպումը.

2) համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Ա. Ալավերդյանի հաղորդման՝ բողոքարկման հանձնաժողովում գործատուների միության ներկայացուցիչների ընդգրկման հարցը համարվում է կատարված:

3) ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականի փետրվարի 24-ի ՄԴՈ-792 որոշման ընդունումից հետո փոփոխվել է նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի առաջին մասի 11-րդ ենթակետի պահանջը.

4) ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀԵԿ-երին տրվող ջրօգտագործման թույլտվության սահմանված ժամկետներն արդեն իսկ վերանայվել են, որի արդյունքում օրենսդրական փոփոխության նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱԺ.

5) Մարդկային ռեսուրսների կառավարման ասոցիացիայի ներկայացրած՝ «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկությունն ընդունված է և օրենսդրական փոփոխությունը ներկայացվել է ՀՀ ԱԺ.

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության կողմից ներկայացված առաջարկությունները

2) հանձնարարել ԳԱԽ-ի շրջանակում ձևավորված աշխատանքային խմբին՝

ա. «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գործարարության աջակցման հարցերի քարտուղարության կողմից ներկայացված առաջարկները դարձնել քննարկման առարկա,

բ. աշխատանքային խմբի քննարկումներին մասնակից դարձնել նաև «Ակադեմիկոս Ա. Լ. Մնջոյանի անվան Գյումրու հիդրոէլեկտրակայան» ՄՊԸ-ի գլխավոր տնօրեն Ն. Նահապետյանին,

3) հանձնարարել ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետ Ա. Սարգսյանին ներկայացնել առաջարկություն՝ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 11-րդ կետով սահմանված տրանսպորտային միջոցի գրավի և լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի պետական գրանցման ժամկետների վերանայման վերաբերյալ:

4) հանձնարարել ՀՀ ֆինանսների նախարար Վ. Գաբրիելյանին՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գ. Խաչատրյանի հետ համատեղ քննարկել «ԱԱՀ-ի մասին» 6¹-րդ հոդվածի փոփոխության և դրա գծով 2009 թվականի սեպտեմբերի 15-ին ընդունված պաշտոնական պարզաբանման հետ կապված խնդիրները և ըստ այդմ ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել առաջարկություն:

5) առաջարկել «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Գ. Արզումանյանին՝ ԶԼՄ-ներով հանրությանը ներկայացնել պաշտոնական պարզաբանում՝ Թեղուտի հանքավայրի շահագործումը միջազգային չափանիշներին համապատասխան էկոլոգիական փորձաքննություն անցկացնելու և նրա անվտանգ լինելու մասին:

3. Գյուղատնտեսության ոլորտի զարգացմանն ուղղված մի շարք առաջարկությունների քննարկման մասին

(Ռ. Ծառուկյան, Տ. Մարգարյան)

Օրակարգի 3-րդ հարցը զեկուցեց «Մուլտի-Ագրո» արտադրական կենտրոն» ՄՊԸ-ի գլխավոր տնօրեն Ռ. Ծառուկյանը և նշեց, որ Ֆերմերների Ազգային Միավորումը (ՖԱՄ) 2010 թվականի աշնանը ՀՀ-ի 10 մարզում հանդիպումներ է կազմակերպել գյուղատնտեսական գործունեություն ծավալող սուբյեկտների, շահագրգիռ կազմակերպությունների և տարածքային կառավարման ներկայացուցիչների հետ: Հանդիպումների նպատակն էր ծանոթանալ ֆերմերների խնդիրներին, մշակել միջոցառումներ՝ իրականացվող գործունեության բարելավման ուղղությամբ: ՖԱՄ-ի 2011 թվականի փետրվարի 10-ին կայացած նախագահության նիստում քննարկվել են զարնան գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման միջոցառումների պլանը և հատկապես կարևորվել հետևյալ հիմնախնդիրները՝

1) նախորդ տարիների ընթացքում ձևավորված, տոհմային տնտեսությունների կարգավիճակ ունեցող ֆերմերային տնտեսությունների կայունությունը և հետագա շարունակական գործունեությունը, քանի որ արտադրվող մթերքի ցածր գների պատճառով կատարված ծախսերը չեն փոխհատուցվում, չկան բավարար նախադրյալներ ընդլայնված վերարտադրության համար.

2) ագրարային ոլորտում իրավական կարգավորման մեխանիզմներն արդյունավետ գործելու համար հողային, ջրային, հողօգտագործման, ջրօգտագործման, կաղրային ապահովվածության քաղաքականության օրենքների և ենթաօրենսդրական ակտերի վերանայման անհրաժեշտությունը, ինչպես նաև երիտասարդ մասնագետների ներգրավումը.

3) «Գյուղատնտեսական ապրանք արտադրողների մասին» և «Գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման ու ֆերմերային տնտեսությունների մասին» ՀՀ օրենքների ընդունման հրատապությունը, որի մշակմանը և ընդունմանը պետք է մասնակից լինեն բոլոր շահագրգիռ կողմերը.

4) սպասարկման ոլորտներում ձևավորված սուբյեկտների մրցակցային դաշտի ձևավորման համար անհրաժեշտ նախադրյալների բացակայությունը.

5) տարբեր մարզերում ֆերմերային գործունեության մեջ երիտասարդների ներգրավվածության անհրաժեշտությունը, որի համար անհրաժեշտ է կիրառել որոշակի

աջակցման քաղաքականություն և հստակ մեխանիզմներ՝ ուղղված գյուղական երիտասարդության գործունեությանը.

6) ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից իրականացվող ծրագրերի գնահատումը, մասնավորապես, տոհմային երինջների ներկրման, սերմնաբուծության ծրագրերից ակնկալվող փաստացի արդյունքները.

7) անասնազվաքանակի ապահովագրական համակարգի ներդրման անհրաժեշտությունը, որը հնարավորություն կտա անցնելու ապահովագրության մյուս ձևերին.

8) բուսաբուծության ճյուղի առաջընթացի համար անհրաժեշտ պարարտանյութերով ապահովվածությունը.

9) ֆերմերների կողմից մինչև ոռոգման սեզոնն օգտագործվող անձրևաջրերի, գետերից վերցված ջրերի համար ջրօգտագործողների ընկերությունների կողմից պահանջվող վճարների հիմնավորվածությունը և դրանց կանոնակարգման անհրաժեշտությունը.

10) ջրարբիացման սակագնի վերանայումը, որի համար առաջարկվում է մինչև մայիս-հունիս ամիսները ջրի բնական հոսանքից (գետեր) օգտվելու դեպքում սակագինը նվազեցնել 30 տոկոսով.

11) պարենային անվտանգության նպատակով գյուղատնտեսական ապրանք արտադրողների նկատմամբ հիմնական պարենային ապրանքների նկատմամբ գների սուբսիդավորման համակարգի կիրառումը (հացահատիկ, յուղատու մշակաբույսեր).

12) երկարաժամկետ տրամադրվող վարկերի մարման նոր համակարգի մշակումը, ըստ որի վարկի մարումը նպատակահարմար է սկսել երկրորդ հաշվետու տարվա վերջում.

13) գյուղատնտեսական գործունեություն ծավալողների համար գրավադրման համակարգի բարելավումը (հողը, շենքերը, գյուղատնտեսական տեխնիկան).

14) գյուղատնտեսական տեխնիկայի և կերերի, գյուղատնտեսական ապրանքների ներկրման նկատմամբ տարվող մաքսային քաղաքականության վերանայումը և բարելավումը.

15) մեղուների անկման համաշխարհային իրական վտանգը:

16) հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեղվաբուծությունը ՀՀ-ում ունի նշանակալի և ակնառու զարգացում՝ այն պահպանելու համար մեղուների վարրոատոզ հիվանդության կանխարգելիչ դեղանյութերի ձեռքբերման և գարնանային բուժ-պրոֆիլակտիկ միջոցառումների կազմակերպման նպատակով մեղվաբուծության ճյուղին 8 մլն դրամ հատկացնելու անհրաժեշտությունը.

ՀՀ գյուղատնտեսության նախարար Ս. Կարապետյանը նշեց, որ ՖԱՄ-ի

ներկայացրած առաջարկների ու խնդիրների մեծ մասը գտնվում են քննարկումների փուլում, իսկ մնացյալ հարցերը համատեղ կքննարկվեն և ըստ անհրաժեշտության ՀՀ կառավարություն կներկայացվեն համապատասխան առաջարկություններ:

Քննարկումներից հետո որոշվեց ընդունել ի գիտություն «Մուլտի-Ագրո» արտադրական կենտրոն» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն Ռ. Ծառուկյանի զեկույցը և առաջարկները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ